## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Կազմակերպեք նախագծային աշխատանք «Մեծամորի ատոմային էլեկտրակայանը» թեմայով: Փորձեք գտնել հետևյալ հարցերի պատասխանները.*

- *Երբ է կառուցվել ատոմակայանը,*
- *Ի՞նչ միջուկային վառելիք է օգտագործվում,*
- *Որքան է հզորությունը,*
- *ՀՀ էներգիայի ընդհանուր ծախսերի ո՞ր մասն է ապահովում,*
- *Երբ կավարտվի նրա շահագործումը*
- *Կա՞ն այն նոր ատոմակայանով փոխարինելու պետական ծրագրեր:*
- *Որքա՞ն է եղել ատոմակայանի կառուցման ընդհանուր ծախսը:*
- *Որտե՞ղ են պահպանվում միջուկային թափոնները:*
- *Ի՞նչ վտանգներ կան շրջակա միջավայրի ռադիոակտիվ վարակման տեսանկյունից:*
- *Ինչպիսի՞ն է ռադիոակտիվության մակարդակը ատոմակայանի շրջակայքում, որքա՞ն է այն բարձր, համեմատած ատոմակայանից հեռու գտնվող վայրերի հետ:*